

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 3274 - Ա

«18» դեկտեմբեր 2013թ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՅՈՂ ՔԱՂԱՔԱՅՈՒՆ ՏՐՎՈՂ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՁԵՎԸ
ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով հաստատված կարգի 8-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն տրվող իրազեկման թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն տրվող իրազեկման թերթիկի լրացման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու կողմից իրազեկման թերթիկի ստացումը հաստատող իրազեկման թերթիկների գրանցման և հաշվառման մատյանի ձևը (ՁևN1):

4. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ Սարո Ծատուրյանին՝ ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված իրազեկման թերթիկի ներառումը 2014 թվականին բժշկական կազմակերպությունների և ՀՀ առողջապահության նախարարության միջև կնքվող «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարման ծառայությունների մատուցման մասին» օրինակելի պայմանագրերում՝ որպես առանձին հավելված:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Սուրեն Քրմոյանին:

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՅՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՏՐՎՈՂ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

« ____ » _____ 20__ թ.

_____ ընկերությունը /այսուհետ՝
Կատարող՝ ի դեմս _____-ի, գործելով իր կանոնադրության, ինչպես
նաև ՀՀ առողջապահության նախարարության հետ կնքված «Պետության կողմից
երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարման
ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի հիման վրա՝ սույնով

ԻՐԱՋԵԿՈՒՄ Է

քաղաքացի _____-ին ներքոհիշյալի մասին.
անուն, ազգանուն

1. Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության և
_____-ի
բուժ կազմակերպության անվանումը

միջև կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ
պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման
ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի, Դուք օգտվում եք պետության
կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման
շրջանակներում անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում
ստանալու իրավունքից:

2. Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը ընդգրկում է դրա կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, այդ թվում՝ հիվանդանոց ընդունման, վարման և դուրս գրման հետ կապված փաստաթղթային ձևակերպումները, լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, դեղերով և բժշկական պարագաներով ապահովումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով հաստատված առանձին ծառայությունների, որոնք ընդգրկված չեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալներում, ընդ որում՝ նման դեպքերում բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու պահանջով բժշկական կազմակերպությունը պարտավոր է վերջինիս հնարավորություն ընձեռնել նշված հրամանների հետ ծանոթանալու համար:

3. Առանձին դեպքերում բուժումը բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու կողմից ձեռք բերված դեղերով թույլատրվում է կազմակերպել միայն բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու գրավոր համաձայնությամբ, հիվանդության պատմագրի մեջ ձևակերպված հիմնավորվածությամբ և բժշկական կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի թույլտվությամբ:

4. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն վճարովի հարբժշկական ծառայությունների մատուցման դեպքում (օրինակ՝ տեսակցության վճար, խնամողի համար նախատեսված վճարումներ, լրացուցիչ հարմարություններով հիվանդասենյակի համար վճար և այլն) ծառայության տվյալ տեսակի համար պետք է գործի նաև անվճար այլընտրանքային տարբերակը:

5. Բժշկական կազմակերպությունը պարտավորվում է տեղեկացնել բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն կամ նրա հարազատին բուժման ընթացքի, ակնկալվող արդյունքների և հնարավոր բարդությունների մասին, ընդ որում՝ բժշկական օգնության և սպասարկման գործընթացի կազմակերպման հետ կապված հարցերով կամ բողոքներով Դուք կարող եք դիմել բուժող բժշկին,

կազմակերպության տնօրինությանը կամ ՀՀ առողջապահության նախարարության «Թեժ գիծ» ծառայությանը (հեռ. 010 52 88 72):

6. Միաժամանակ Դուք իրազեկվում եք, որ բուժման ընթացքում պարտավոր եք պահպանել բժշկական կազմակերպության ներքին կանոնակարգը, հետևել բուժման ընթացքի վերաբերյալ բուժող բժշկի և այլ իրավասու բժշկական անձնակազմի նշանակումներին և ցուցումներին:

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

_____ Կ.Տ.

ԿԱՐԳ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
ՍՏԱՅՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՏՐՎՈՂ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ԼՐԱՅՄԱՆ

1. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը (այսուհետ բժշկական կազմակերպություն) պարտավոր է ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված իրազեկման թերթիկի տրամադրումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող բոլոր քաղաքացիներին, ինչպես նաև վարել իրազեկման թերթիկի գրանցման և հաշվառման առանձին մատյան:
2. Իրազեկման թերթիկը տրամադրվում է անմիջականորեն բուժօգնություն ստացող քաղաքացուն, իսկ մինչև 18 տարեկան երեխաների դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցչին: Առանձին դեպքերում իրազեկման թերթիկը կարող է տրամադրվել նաև քաղաքացու հարազատին՝ ելնելով բուժօգնություն ստացող քաղաքացու առողջական վիճակից:
3. Իրազեկման թերթիկը ստորագրվում է բժշկական կազմակերպության տնօրենի կողմից հրամանով նշանակվող իրավասու անձի կողմից և հաստատվում կազմակերպության կնիքով:
4. Քաղաքացին իրազեկման թերթիկի ստացումը հաստատում է իրազեկման թերթիկների գրանցման և հաշվառման համար նախատեսված համապատասխան մատյանում ստորագրելու միջոցով:

Մ Ա Տ Յ Ա Ն

ԻՐԱՋԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN	Քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը	Հիվանդության պատմագրի համարը	Ամսաթիվը	Ստորագրություն
1.				
2.				
3.				